ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2026թ. **N------ Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն			
1	վարչության պետ	1	697,000	697,000
2	վարչության պետի տեղակալ	1	561,000	561,000
-	**Երեխաների պաշտպանության բաժին**			
3	բաժնի պետ	1	408,000	408,000

4	գլխավոր մասնագետ - սոցիալական աշխատող	1	289,000	289,000
5	գլխավոր մասնագետ - իրավաբան	1	289,000	289,000
6	գլխավոր մասնագետ - հոգեբան	1	289,000	289,000
7	առաջատար մասնագետ - սոցիալական աշխատող	1	282,200	282,200
8	առաջատար մասնագետ	2	282,200	564,400
9	առաջին կարգի մասնագետ	3	272,000	816,000
-	**Սոցիալական պաշտպանության բաժին**			
10	բաժնի պետ	1	408,000	408,000
11	գլխավոր մասնագետ - սոցիալական աշխատող	1	289,000	289,000
12	գլխավոր մասնագետ - իրավաբան	1	289,000	289,000
13	գլխավոր մասնագետ - հոգեբան	1	289,000	289,000
14	առաջատար մասնագետ	2	282,200	564,400
15	առաջատար մասնագետ - սոցիալական աշխատող	1	282,200	282,200
16	առաջին կարգի մասնագետ	3	272,000	816,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**22.0**		**7,133,200**

»,

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «816.0» և «276,240,145» թվերը փոխարինել համապատասխանաբար «821.0» և «277,610,345» թվերով,

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2,474.0» և «733,994,745» թվերը փոխարինել համապատասխանաբար «2,479.0» և «735,364,945» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու՝ 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի հաստիքացուցակում իրականացնել մի շարք փոփոխություններ, որոնց ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից իրականացվող ծրագրերի շարունակական ընդլայնումը և, դրանով պայմանավորված, աշխատանքային ծանրաբեռնվածության զգալի աճը բարդացրել են գործող հաստիքային միավորներով արդյունավետ իրականացնելու Վարչության առջև դրված նպատակները:

Սույն նախագծով առաջարկվում է Վարչության երեխաների պաշտպանության բաժինն ավելացնել 1 միավոր առաջատար մասնագետի և 2 միավոր առաջին կարգի մասնագետի հաստիքներով, իսկ սոցիալական պաշտպանության բաժինը՝ 2 միավոր առաջին կարգի մասնագետի հաստիքով:

Վարչության երեխաների պաշտպանության բաժնում վերը նշված հաստիքային միավորների ավելացման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ 2025թ. տարեվերջին ՀՀ Ազգային ժողովի կողմից «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքների ընդունումից հետո 24 ամիսների ընթացքում ոլորտային բազմաթիվ ենթաօրենսդրական իրավական ակտեր են ընդունվելու, որոնք իրենց հերթին երեխաների պաշտպանության գործընթացում Երևանի քաղաքապետարանի մասով ապահովելու է գործառույթների բազմաթիվ շրջանակ:

Ինչ վերաբերում է Վարչության սոցիալական պաշտպանության բաժնում առաջարկվող ավելացումներին, նշված փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է սոցիալական պաշտպանության ոլորտում վերջին տարիներին իրականացված շարունակական բարեփոխումներով՝ կապված սոցիալական ծառայությունների արդյունավետության բարձրացման, թիրախայնության ապահովման և քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման հետ: Միաժամանակ, համապատասխանաբար ոլորտը կարգավորող իրավական դաշտում արձանագրվել են էական փոփոխություններ և լրացումներ՝ ինչպես օրենքների, այնպես

էլ ենթաօրենսդրական ակտերի մակարդակում, որոնց արդյունքում լիազոր մարմնի կողմից նախաձեռնված և ընդունված մի շարք նոր կարգավորումների և իրավական ակտերի շարունակական վերանայման և համապատասխանեցման գործընթացի հետևանքով զգալիորեն ընդլայնվել են համայնքային մարմինների, այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների գործառույթներն ու պարտականությունները:

Արդյունքում, սույն նախագծով առաջարկող փոփոխություններով՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքային միավորների թիվը կավելանա 5 միավորով, իսկ աշխատավարձի ամսական ֆոնդը կավելանա 1,370,200 ՀՀ դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ